«Presumptive Eligibility for Pregnant Women» ծրագիրը
ՀԻՎԱՆԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ի՞նչ է «Հղի կանանց համար ենթադրյալ իրավասությունը» (Presumptive Eligibility (PE) for Pregnant Women):
«Հղի կանանց համար PE»-ն հղիության հետ կապված շտապ, ժամանակավոր բուժսպասարկում է ցածր եկամուտ ունեցող կանանց համար:

Ո՞վ է իրավասու «Հղի կանանց համար PE» ստանալու:
Ցանկացած կին, որը կարծում է, որ հղի է, և որի ընտանիքի եկամուտը որոշակի գումարից ցածր է, իրավասու է PE ստանալու: (Օրինակ՝ երկու անդամից բաղկացած ընտանիքի ամսեկան եկամուտը 2011 թ. ապրիլից մինչև 2012 թ. մարտը կազմել է $2452. հղի կինը երկու հոգի է համարվում:) Հարկավոր է դիմել ծրագրի պահանջների համապատասխանող մասնակից սպասարկողի միջոցով: Հարցրեք Ձեր բուժսպասարկողին, թե արդյո՞ք նա «Հղի կանանց համար PE» տրամադրում է: Ապահովագրությունը սկսում է գործել բուժսպասարկում ստանալու նպատակով Ձեր կատարած առաջին այցելության օրվանից:

Որքա՞ն ժամանակ կարող եմ ես «Հղի կանանց համար PE» ստանալ:
«Հղի կանանց համար PE»-ն գործում է դիմելու ամսվա և ամբողջ հաջորդ ամսվա ընթացքում: Ձեր «Իրավասության ապացույցի» քարտի վրա նշված կլինի ավարտի ճշգրիտ օրը: Ձեր ապահովագրությունը կավարտվի այդ օրը, եթե չդիմեք «Medi-Cal»-ի համար: Ձեր ապահովագրությունը երկարաձգելու համար Դուք պետք է Ձեր «Հղի կանանց համար PE»-ի սպասարկողին ապացույց ներկայացնեք այն մասին, որ դիմել եք «Medi-Cal»-ի համար: Ապացույցը հարկավոր է միայն մեկ անգամ ներկայացնել: Ձեր ապահովագրությունն այնքան ժամանակով կերկարաձգվի, մինչև Դուք փոստով ստանաք Ձեր «Medi-Cal»-ի պլաստիկ քարտը, կամ մինչև շրջանը մերժի Ձեր դիմումը:

Ի՞նչ տիպի բուժսպասարկման համար է վճարում «Հղի կանանց համար PE»-ն:
«Հղի կանանց համար PE»-ն վճարում է հղիության հետ առնչվող, այդ թվում՝ հղիության արհեստական դադարեցման և վիժման հետ կապված բուժսպասարկման համար: Վճարվում է բժշկին, կլինիկա և շտապ օգնության սենյակ կատարած այցելությունների մեծ մասի համար: Նախածննդյան վիտամինների և դեղերի մեծ մասի համար նույնպես վճարում է նախատեսված: «Հղի կանանց համար PE»-ն վճարում է հղիության հետ կապված որոշակի ատամնաբուժական և հոգեբուժական ծառայությունների համար: «Հղի կանանց համար PE»-ն Չի վճարում հիվանդանոցի կողմից տրամադրվող ծննդաբերական ծառայությունների և այլ կարգի ներհիվանդանոցային բուժսպասարկման համար:

Ի՞նչ անել, եթե բուժսպասարկման համար ինձ հաշիվներ ներկայացվեն:
Հնարավոր է, որ Ձեզ այնպիսի բուժսպասարկում տրամադրվի, որը չի վճարվում «Հղի կանանց համար PE»-ի կողմից: **Մինչև «Հղի կանանց համար PE»-ի ավարտվելը ԿԱՄ ծառայությունը ստանալու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում (այլ Ո՛Չ ներկայացված հաշվի վրա նշված ամսաթվից, այլապես կարող է ուշ լինել) դիմեք «Medi-Cal»-ի համար:** «Medi-Cal»-ի դիմումի ձևի վրա «այո» պատասխանեք վերջին երեք ամսվա ընթացքում բուժսպասարկման համար կատարված ծախսերի մասին հարցին, եթե անգամ դեռ ոչ մի հաշիվ չեք ստացել: Եթե PE-ի ավարտից հետո Դուք չեք ցանկանում «Medi-Cal» ստանալ՝ վիժելու կամ որևէ այլ պատճառով, հարկավոր է, այնուամենայնիվ, դիմել և «այո» պատասխանել «Medi-Cal»-ի եռամսյա ապահովագրության մասին հարցին: «Medi-Cal»-ը կարող է վճարել «Medi-Cal»-ի դիմումին նախորդած այն երեք ամսվա ընթացքում Ձեր ստացած բուժսպասարկման համար, որի համար «Հղի կանանց համար PE»-ն չի վճարում:

Ի՞նչ անել, եթե ես արդեն վճարել եմ իմ բուժսպասարկման համար:
Այն բանից հետո, երբ Դուք դիմեք և ստանաք «Medi-Cal», խնդրեք Ձեր սպասարկողից հաշիվ ներկայացնել «Medi-Cal»-ին և վերադարձնել Ձեր գումարը: Եթե սպասարկողը հրաժարվի այդ անել, զանգահարեք կամ գրեք Sacramento շրջանի «Medi-Cal» ծրագրին *«Conlan»-ի* Beneficiary Reimbursement Program»-ի մասին:

Բժշկական հայցերի համար՝
Department of Health Care Services
Beneficiary Services
P.O. Box 138008
Sacramento, CA 95813-8008
(916) 403-2007
TDD: (916) 635-6491

Ատամնաբուժական հայցերի համար՝
Denti-Cal
Beneficiary Services
P.O. Box 526026
Sacramento, CA 95852-6026
(916) 403-2007
TDD: (916) 635-6491

ԵԹԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ Լ«ՀՂԻ ԿԱՆԱՆՑ ՄԱՆԱՐ PE» ՍՏԱՆԱԼ ԿԱՄ ԴԻՄԵԼ «MEDI-CAL»-Ի ՀԱՄԱՐ, ԽՆԴՐԵՔ ՁԵՐ ՍՊԱՍԱՐԿՈՂԻՆ: